ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆԱՐԸ

ԽԱԺԱԿ ԴՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

Նաիրի Զարյանը բառիս լավագույն իմաստով քաղաքացի-գրող էր, և հայրենասիրությունն առկա է նրա բոլոր երկերում՝ սկսած մտերմիկ քնարական բանաստեղծություններից, մինչև վեպերը, դրամատիկական երկերը, հրապարակախոսական հոդվածներն ու ակնարկները, ինչպես, օրինակ, «Տավրիկյան պարանոցում» նոթագրությունը, որը թեև այժմ այնքան էլ հաճախ չի հիշվում, սակայն հայ նոթագրական ժանրի լավագույն երկերից է։

Պակաս կարևոր չէ նաև, որ բանաստեղծը քաջ գիտակցում էր, որ պատմական զարգացման յուրաքանչյուր փուլում հայրենասիրությունն արտահայտվում է յուրովի, նոր ձևերով ու երանգներով, և գրականության ժողովրդայնությունն էլ չափվում է նրանով, թե ինչպես ու որքան խոր է արտացոլում այդ կոնկրետ դրսևորումները։ Այս իմաստով գեղարվեստական գրականության մեջ հայրենիքի գաղափարը, ըստ ժամանակի պահանջների, հաճախ բավական մեծ կերպարանափոխություններ է ենթարկվում։

Մեր նպատակն է հետևել այս կերպարանափոխություններին՝ աչքի առաջ ունենալով Նաիրի Զարյանի չափածո երկերի, մեր կարծիքով ամենատիպական, օրինակները։

1920-ական թվականները բնորոշ են պոեզիայի բուռն տեղաշարժերով։ «Պոեզիայի դարաշրջան»,— այսպիսիք են սովետական կյանքի առաջին տարիները։ Սրա պատճառները խորն են։ Դրանց մեջ կարևոր են և՛ հասարակական-քաղաքական սիստեմի հեղաբեկման փաստը, որն արտակարգ ոգևորություն էր ծնել, և՛ այն, որ բանաստեղծական ժանրերը ոչ միշտ են առարկայական, ինչպես արձակը կամ դրամատուրգիան, որոնցում ինչ-որ չափով պարտադիր են սյուժեն, ֆաբուլան, կերպարները։ Դրա փոխարեն պոեզիան հաճախ ձեռք է բերում հուզական այնպիսի պաթոս, որն իրենով փոխարինում է արձակի ու դրամատուրգիայի առարկայականությունը։

Այս իմաստով հասարակական-քաղաքական սիստեմի հեղաբեկումը նրկակի անդրադարձավ բանաստեղծական ժանրերի վրա։ Մի կողմից հեղափոխական ոգևորությունը, մյուս կողմից անցյալի արվեստի ու գրականության բովանդակության, իսկ երբեմն նաև ձևերի հախուռն մերժումը, որ արդյունք էր նորի տենդագին որոնումների և «կարմիր գծից անդին» ստեղծված արժեքների միակողմանի ընկալման, ավելի շատ արտահայտվում էին բանաստեղծական ժանրերում, քան արձակի մեջ։ Մեր նպատակից դուրս է հանգամանալից բնութագրել գռեհիկ սոցիոլոգիզմը, որը հասարակական մտածողության յուրատեսակ սիստեմ դառնալու միտումներ էր հայտաբերում և, որի դեմ սիստեմատիկ պայքար էր մղում մարքսիստական միտքը։ Հատկապես անցյալի արժեքների գնահատության հարցում գռեհիկ սոցիոլոգիական մտա-

ծողությունը երբեմն հասնում էր այնպիսի չափազանցությունների, երբ հակադրվելու տենդն արգելակում էր բանաստեղծության բնականոն զարգացման ընթացքը։ Երիտասարդ նորարարներն անցյալում հաճախ չէին տեսնում Երկու կուլտուրա, ինչպես և չէին կարողանում գնահատել այն հսկայական նվաճումները, որ ձեռք էին բերել բաղմադարյան արվեստն ու գրականությունը։ Մերժվում էր այն ամենը, ինչ հիշեցնում էր ատելի անցյալը՝ սկսած կոստյումից ու փողկապից, մինչև ավանդական իմաստով հայրենիքի գաղափարը, որը, ըստ երևույթին, ամենից շատ էր հիշեցնում բուրժուական հարաբերությունները։ Անցյալի արվեստում ամենուրեք տեսնելով անհատապաշտության հաղթանակը, երիտասարդ բանաստեղծներն առաջ էին քաշում «հզոր մենքի» գաղափարը, որը, ի վերջո, կլանում էր քնարական հերոսի և իրեն իսկ բանաստեղծի անհատականությունը, գրեթե ամոթալի հռչակում նրա գորովագին զգացումները, այդ թվում և ծննդավայրի հանդեպ։ Կամա թե ակամա բանաստեղծն իրեն հռչակում էր աշխարհաքաղաքացի և փորձում վերաքննության ենթարկել ինքն իր բնական զգացումը։

Զարգացման այսպիսի հիվանդագին պահեր ապրեցին գրեթե բոլոր գրողները, այդ թվում նաև **Նաիրի Զարյանը**։ Սրա ազդեցությունը տեսնում ենք, օրինակ, 1922 թ. «Մուրճ» ամսագրի չորրորդ համարում զետեղված «Ով է հիշում» բանաստեղծության մեջ, որ հետագայում հեղինակը վերնագրել է «Հրաժեշտ»։ Բայց ի պատիվ բանաստեղծի պիտի ասենք, որ այս դեպքում դրված թեզը, այնուամենայնիվ, չկարողացավ լիովին քողարկել նրա բուռն զգացումը, որը ենթագիտակցորեն արտահայտվեց որպես անանց կարոտ.

Է՜յ, դու հնացել ես,
Հիմա դու անցել ես.
Գնացել ես արդեն,
Գյուղ իմ հայրենի,
Խառակոնիս։
Ո՞վ է հիշում հիմա,
Ես հազիվ եմ հիշում.—
Տնակներդ նեղ, ցած,
Որ քով քովի նստած պառավների նման
Զրուցում են մուժում—
Հնի՜ց, հնի՜ց, հնի՜ց...[1]։

Դժվար չէ նկատել, որ սա փորձ է նորովի մեկնաբանելու հայրենիքի գաղափարը։ Բայց իրականում որքա՞ն է նոր արտահայտման այս ձևը։ Նախ այստեղ չենք տեսնում «տիպական ընդհանուրը», այսպես կոչված՝ «հզոր մենքի» փառաբանումը։ Սա ոչ թե հավաքական, համայնական զգացման արտահայտություն է, այլ բանաստեղծի ներքին հոգեկան ապրումի. ընդ որում, բավականաչափ ավանդական ձևով։ Մանկության հուշ է սա՝ տոգամեջ առկայծող կարոտով, որբի տխրությամբ, ու թեև բանաստեղծն այդ կարոտն ու տխրությունը աշխատել է կարելույն չափ խոր թաքցնել, այնուամենայնիվ,

---

[1] Նաիրի Զարյան, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1962, էջ 31։

դրանք երևում են, քանի որ հենց դրանք են ստեղծագործական մղում տվել նրան։ Նա ձգտում է հավատացնել, թե անցյալի գյուղական պատկերն օտարացել է, մինչդեռ ոտանավորը գրելու փաստն իսկ պնդում է հակառակը։ Այսինքն՝ նոր գաղափարներն, այնուամենայնիվ, չեն կարողացել եռին պլան մղել ավանդական հայրենասիրությունը։

Այս նրբին հոգեբանական հակասությունը հատուկ է եղել և՛ Ե. Չարենցին, և՛ Գ. Մահարուն, և՛ ժամանակի մյուս երիտասարդ բանաստեղծներին։ Ժամանակ էր հարկավոր հաղթահարելու համար այս երկվությունը, լիովին ու անդարձ ընդունելու, որ որքան էլ տարբեր, բայց նոր ժամանակների արվեստը օրգանական շարունակությունն է դասական արվեստի, և ոչ մի հիմք չկա մերժելու անցյալի արվեստի նվաճումները, այդ թվում հայրենասիրության փայլուն արտահայտությունները։

1930-ական թվականների առաջին տարիները կյանքի աննախընթաց վերելքի տարիներ էին։ Բանաստեղծության մեջ դա արտահայտվում էր զարգացման նախորդ ժամանակաշրջանից եկող քաղաքացիական զգացման արտակարգ սրությամբ, արձակում՝ թեմաների մասշտաբայնությամբ, հերոսների ընդգծված սկզբունքայնությամբ, որպիսիք էին ռուս գրականության մեջ Շոլոխովի «Հերկած խոպանի», իսկ մեզանում Չարյանի «Հացավանի» հերոսները, որոնք կերպավորված են ոչ այնքան առտնին հարաբերություններում, որքան իրենց հասարակական գործունեության մեջ։ Եթե նախորդ ժամանակաշրջանում առատ էին բանաստեղծություններն այն մասին, թե ինչպիսին պետք է լինի նոր ժամանակների արվեստը, ապա այժմ բանաստեղծներն ինչ-որ չափով կարծես հայտնագործել էին նպատակը, որն ամենադիպուկ կերպով ձևակերպեց Ե. Չարենցը.

Թե ուզում ես երգդ լսեն՝
Ժամանակիդ շունչը դարձիր...[2]։

Ժամանակի շունչը դառնալ պրակտիկայում նշանակում էր ոչ միայն գրչով, այլև հասարակական գործունեությամբ մասնակցել երկրի քաղաքական ու տնտեսական կյանքին։ Պատահական չէ, որ կոլտնտեսային շարժման եռուն օրերին շատ գրողներ, այդ թվում և Չարյանը, մեկնեցին գյուղ անձամբ մասնակցելու այդ շարժմանը։ Այսպիսի անմիջական կապը կյանքի հետ շատ օգնեց Չարյանին գրելու «Ռուշանի քարափը», «Հացավանը» և ուրիշ երկեր։

Մյուս կողմից, ինչպես և նախորդ շրջաններում, հանուն նորի հաստատման հարկավոր էր փառաբանել բոլոր բնագավառներում երկրի ձեռք բերած նվաճումները։ Մի Շիրշրանցք, որը մեր ժամանակների տեխնիկական հեղաշրջման մասշտաբներով չափելու դեպքում չնչին կարող է երևալ, տեխնիկական անգրագիտության վերացման մի կայան, հանդում օր-օրի սովորական դարձող գյուղատնտեսական մեքենան, մի գործարան, որտեղ արտադրվում է հաստոցաշեն հաստոց, քաղաքում կառուցված մի ժամանակակից բնակելի շենք, գյուղում մի նորակառույց ակումբ... Այս ամենն առաջին հերթին հաստատումն էր նոր գաղափարների կենսունակության և սրանց

---

2 Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968, էջ 26։

փառաբանումը՝ գրողի հայրենասիրության առհավատչյան։ Սրանով պիտի բացատրել, որ ժամանակի նշանավոր բոլոր բանաստեղծների գրքերում երևվացին բազմաթիվ չափածո երկեր, որոնցում մտերմիկ հարաբերություններից առաջ խոսք է բացվում հայրենի երկրի նվաճումների մասին։

Բարձրացել է մեր հզոր, անծայր հայրենիքում
Վիթխարաթափ մի ալիք, անմար մի աղաղակ։
Այդ աղաղակն է լսում, այդ աղաղակն է երգում
Յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր բաղաք։

Այդ մի հորձանք է հուժկու, մի սիրտ է լեռնացող,
Մի հաղթական ճռնչյուն ձգված մկանների,
Տիտանական հույզերի որոտաշունչ մի ծով,
Մտքի խիզախ կայծակներ ու տենչերի մրրիկ։

Այդ կառուցման, վերելքի երգ է շռնդալից,
Դոմնաների բոց է այդ, մոտորների որոտ.
Այդ կոմունիզմն է կյանքին մեծ քննություն տալիս
Մետաղակուռ ձայնի մեջ հերոսական կորով։

Այդ աղաղակն է այսօր բանակները դարսում,
Պտուտակները պնդում, ցրում կասկած և խոց,
Այդ աղաղակն է տալիս, այդ աղաղակն է լսում
Յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր հաստոց...[3]

Այսպես գրում է Զարյանը 1930 թվականին։

Այս տիպի բանաստեղծությունները, իհարկե, պատկերավորության ու գեղարվեստական նրբաճաշակության տեսակետից զիջում են բանաստեղծի լավագույն երկերին, սակայն զարմանալի ճիշտ ու խորն են արտահայտում «ժամանակի շունչը»։ Սրանցում, թեև քնարական բարեհնչունությունը զոհ է գնում քաղաքացիական պաթոսին, սակայն դա արվում է գիտակցաբար, որովհետև Զարյանը լավ է հասկանում օրերի պահանջը։ Այդ մասին նա գրել է դեռևս ստեղծագործական ճանապարհի սկզբին.

Գրչով իմ պրոլետարի,
Իմ կոպիտ, անտաշ տողերով,
Մանյակներ մաքուր մարգարտից
Գիտեմ, որ շարել չեմ կարող։

Հանգերս կհնչեն կոպիտ,
Բառերս՝ ոմանց գռեհիկ,
Եվ այդ ո՞ր բանակն է քնքուշ,
Նազանքով դնում գրոհի...[4]

---

[3] Նաիրի Զարյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 48։
[4] Նույն տեղում, էջ 5։

Այս քաղաքացիական պաթոսը, որ արգասիք է հայրենասիրության նորովի ընկալման, իշխում է Չարյանի երեսնական թվականների բոլոր ստեղծագործություններում՝ «Երևանին», «Տիկին տխրություն», «Երգի երազ», և այլ բանաստեղծություններում, նշանավոր «Երկու հանճարեղ գլուխ» խոհափիլիսոփայական տաղում, այնպիսի պոեմներում, որպիսիք են «Ռուշանի քարափը» և «Սաքո Միկինյանը»։ Հատկապես վերջինիս մեջ անմիջականորեն է դրվում անհատի և հանրության, որ տվյալ դեպքում նույնն է, թե անհատի և հայրենիքի փոխհարաբերության ավանդական հարցը՝ հասարակական նոր կարգի պայմաններում։

Ու խոնջացած անրջանքի պահին միայն բանաստեղծը մերթ ընդ մերթ իրեն թույլ է տալիս խոսք բացելու իր զգացումների, հոգսերի, ուրախությունների ու տխրությունների մասին, նկատելու հայրենի բնության խաղաղ իդիլիան («Իդիլիա»), էպիկական չափածոյի կանաչ կղզին թողած սուզվելու արձակի օվկիանոսը («Նավահանգիստ»), նկարագրելու ոչ թե պայծառ գաղափարի անձնազոհ մարտիկին, որը «չի իջնում» մինչև առտնին հոգսերն ու զգացումները, այլ սիրող, ուրախացող, վշտացող, իր անձնական կյանքով ապրող մարդուն։ Բայց այս ինքնատփոփումը, այս «շեղումը» հիմնական մայրուղուց, ըստ էության, իսկական շեղում չէ, քանի որ բանաստեղծի քնարական հերոսը, օժտված ներանձնական զգացումներով, ինչ-որ չափով ներկայանում է նույնիսկ ավելի վաղ շրջանի էպիկական երկերում։ Այսպիսին է, օրինակ, Հրանուշը, համանուն պոեմի հերոսուհին, թեև նրա կերպավորման հարցում բանաստեղծի առաջնահերթ նպատակն է եղել օժտել նրան հավատի զինվորի ու նահատակի գծերով։ Չարյանի քաղաքացիական պոեզիայի, և առհասարակ ողջ ստեղծագործության, երկարակեցության պատճառներից մեկն էլ սա է, ընդ որում՝ ոչ ոք հեղինակից լավ չի հասկանում, թե դեպի ուր կարող է տանել քաղաքացիության մերկապարանոց դրսևորումը, և թե բանաստեղծն ինչպիսի նվիրական զգացումներ է հաճախ զոհաբերում հանուն բարձր հայրենասիրության։ Փոքր-ինչ ավելի ուշ, Հայրենական պատերազմի թեժ օրերին այդ մասին նա գրել է.

Ես լաց չեղա։
Ախ, «քնարականնե՞ր»,
Կարծում եք, թե չունե՞մ ես արտասուք,
Հեղեղս, թողնեի, շառաչելով կառներ
Թացությունից մգլած հատորիկները ձեր
Եվ կտաներ անդարձ մոռացության... Բայց դուք
Անձրևեցեք աշնան պես միալար՝
Կողոպտելով ամպերը Տերյանի։
Կայծակն եմ ես ընտրում հոգիս չորացնելու համար,
Որ դարձնեմ վառոդ և հրետանի[5]։

Մեր երկրի վրա գերմանական ֆաշիզմի ուխտադրուժ հարձակումով սկսվեց սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը, որը յուրաքանչյուր գրողի ստեղծագործության քաղաքացիական արժեքի փորձաքարը

[5] Նույն տեղում, էջ 228։

եղավ։ Գրողներից ամեն մեկն իր խառնվածքի համաձայն արձագանքեց համաժողովրդական պայքարին։ Քնարական բանաստեղծներն առաջին հերթին ցավագնորեն ապրեցին երիտասարդ մարդու անձնական երջանկության խաթարումը, այն, որ սերմնացանները չվերադարձան, ցավագնորեն ապրեցին որդեկորույս մոր անաղմուկ ողբերգությունը, այն խոր վիշտը, որ պատճառեց աշխարհավեր պատերազմը միլիոնավոր խաղաղ մարդկանց։ Սա նույնպես հայրենասիրական տուրք էր, ազնիվ սրտերից բխող քնարական ձայն, և այս տիպի բանաստեղծություններում ևս զոհված հարազատի համար թափվող արցունքի մեջ չէր խեղդվում հաղթանակի պայծառ հավատը։ Բայց պատերազմի տարիներին շատ ավելի տարածված էր բանաստեղծության մեկ ուրիշ տեսակը, որն ավելի անմիջականորեն էր մասնակցում ճակատամարտերին՝ որպես հոգեբանական-գաղափարական հզոր զենք։ Այս զենքի ամենատաղանդավոր կրողը ժամանակի հայ գրականության մեջ Նաիրի Զարյանն էր։

Պատերազմի առաջին իսկ օրը Մոսկվայում նա գրեց իր հռչակավոր էքսպրոմտը, որը սովետական մարդու հայրենասիրության ամենափայլուն դրսևորումներից մեկն է.

Դու քաղցր ես հող իմ հայրենի,
Չկա քեզնից անուշ անուն,
Բայց վտանգի ահեղ ժամին,
Երբ սպառնում է թշնամին,
Դու ավելի ես քաղցրանում[6]։

Այս պայծառ հայրենասիրությամբ անցավ Զարյանը մեծ Հայրենականը։ Պատերազմի ահեղ օրերին նա այցելեց ռազմաճակատի հայ մարտիկներին՝ տեղում այրելու նրանց սրտերը մաքառող հայրենիքի ազատության գաղափարով։ Նրա կրակոտ բանաստեղծությունները՝ «Մարտակոչ», «Նա պիտի կախվի», «Միցկևիչ և Հիտլեր», «Գերմանիա», «Ուղերձ իմ ժողովրդին», «Վերջին ժամ», «Հերոս քաղաք», «Կիևը մերն է», «Մենք չենք տա Մոսկվան» և այլն, «Զայն հայրենական» անզուգական պոեմի հետ միասին, հայ աղջիկները սիրո խոստովանանքի փոխարեն ուղարկում էին ռազմաճակատ, ու մենք էլ գործող բանակի հազարավոր այլ մարտիկների հետ առիթ ենք ունեցել տեսնելու, թե հայրենասիրական ինչպիսի ոգևորություն էին առաջացնում դրանք։

Հայտնի է այն հակակրանքը, որ տածում էին Պուշկինն ու Մայակովսկին, Սալտիկով-Շչեդրինն ու Պարոնյանը, Թումանյանն ու Զարենցը իներտության, անտարբերության նկատմամբ։ Հին իմաստությունը՝ հակակրանքը անտարբերության հանդեպ, որ ժողովրդից առնելով օգտագործել են Ռոբերտ Էբերհարտն ու Բրունո Յասենսկին[7], յուրաքանչյուր ազնիվ գրողի համար հայրե-

---

6 Նույն տեղում, էջ 175։

7 «Մի՛ վախեցիր թշնամիներից. վատագույն դեպքում նրանք կարող են քեզ սպանել։ Մի՛ վախեցիր բարեկամներից. վատագույն դեպքում նրանք կարող են քեզ դավաճանել։ Վախեցիր անտարբերներից. նրանք չեն սպանում ու չեն դավաճանում, բայց միայն նրանց լուռ համաձայնությամբ է, որ երկրի վրա գոյություն ունեն դավաճանությունն ու սպանությունը» (Бруно Ясенский, Избранные произведения, т. I, М., 1975, с. 231).

նասիրության չափանիշ էր մասնավորապես Հայրենական պատերազմի օրերին։

Զարյանի ստեղծագործության մեջ այս տեսակետից առանձնակի տեղ է գրավում «Բաց նամակ» ծրագրային բանաստեղծությունը՝ գրված 1942 թ.

Ես կարդացի վերջերս մի նովել
Ձեր նրբատաշ գրչով շարադրված...
Դժվար է, բարեկա՛մ, չընդդիմանալ.
Ձեզոքություն այսքան էլ անաստվա՞ծ։
... Դու չե՞ս տեսնում արդյոք, որ աշխարհում
Չկա չեզոք հողի մի թիզ անգամ։
Ատելության հրդեհն է դալարվում
Ամենուրեք։ Մշտադալար կյանքի
Անտառն է խոլաբար բոցավառվում։
Որտե՞ղ ես դու կանգնած այդքան հանգիստ
Որոճալով առվույտրդ երեկվա։
Օսլայափայլ քո նովելում չկա
Ստվերն իսկ մեր ահեղ ժամանակի։
Իզուր ես դու այդպես պատսպարվում
Չեզոքության խախուտ կտուրի տակ։
Պայթում է հարցն ինչպես ֆուգասառումք.
— Ասա՛, դու դավաճա՞ն ես, թե՞ դիակ[8]։

Այս քամահրանքն ու ատելությունն՝ ուղղված անտարբերության դեմ, Զարյանի հայրենասիրության արտահայտման ձևերից մեկն է, այն հայրենասիրության, որը, ի թիվս այլ երկերի, հայ դրականությանը պարգևեց նրա երկու գլուխգործոցները՝ «Զայն հայրենականն» ու «Արա Գեղեցիկը»։

Հայրենական պատերազմի տարիներին դարձը դեպի անցյալի թեմաները ոչ պատահական էր, ոչ էլ զուտ հայկական երևույթ։ Հիշենք, թե որքան պատմական դրամաներ ու հատկապես վեպեր են ստեղծվել համաշխարհային գրականության մեջ և ինչպես են դրանք տեղադրվում պատմական բախտորոշ իրադարձությունների ժամանակներում։ Նույնը վերաբերում է նաև հայ գրականությանը։ Բացառություն չեն կազմում ո՛չ Րաֆֆու «Սամվելն» ու «Դավիթ Բեկը», ո՛չ Մուրացանի «Գևորգ Մարզպետունին», ո՛չ Մերենցի պատմավեպերը, ո՛չ Դեմիրճյանի «Երկիր հայրենին» ու «Վարդանանքը», ո՛չ էլ Զորյանի «Պապ թագավորը»։ Այս երկերի հեղինակները պատմական անցյալին են դիմել ո՛չ անցյալի պրոբլեմները լուսաբանելու, այլ հենց իրենց ապրած ժամանակների հրատապ հարցերին արձագանքելու համար։ Գրականության մեջ ոչ մի բան այնպես վարակիչ չէ, ինչպես անցյալի հերոսական անցքերի օրինակները։ Հայրենասիրության արտահայտման ամենաներգործուն ասպարեզն է սա։ Ինչպես վերը թված բոլոր գրողները, Զարյանը ևս իր «Արա Գեղեցիկով» նոր ժամանակներին էր ծառայում։

Մենք նպատակ չունենք մանրամասն վերլուծելու այս նշանավոր երկը, որի մասին գրվել ու դեռևս պիտի գրվեն ծավալուն ուսումնասիրություններ։

---

[8] Նաիրի Զարյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 216։

Հարևանցի նկատենք միայն, որ հավատարիմ անհատի ու հանրության շահերի համադրման իր սկզբունքին, այստեղ ևս Զարյանը հոգեբանական պայքարի մեջ է ներքաշում մի կողմից սերը՝ ամենահզորը մարդկային զգացումներից, մյուս կողմից՝ հայրենիքի հանդեպ մարդուս ունեցած պատասխանատվության զգացումը։ Դրամատիկական կոնֆլիկտի բարդությունն այն է, որ իրար դեմ ելած այս երկու հզոր ուժերի պայքարը տեղի է ունենում մեկ կերպարի մեջ։ Արան բուռն սիրո կրողն է։ Նրա սերն այնքան հզոր է, որ մարտի թեժ պահին նա իր հայրենիքի թշնամու վրա նետ չի արձակում, բայց միաժամանակ նրա սրտում փոթորկում է արժանապատվության վեհ զգացումը, որը, ի վերջո, կարողանում է հաղթել բուռն սիրո զգացմանը։ Հիշենք նրա խոսքերը, որ վիրավորված ինքնասիրությամբ նետում է չքնաղ աշխարհակալի երեսին.

Զքնա՞ղդ Շամիրամ, ինչո՞ւ ես ինձ վիրավորում,
Ինչո՞ւ իմ ընծաները «հարկ» ես անվանում։
Մի՞թե պարտվել են քո զորքից գնդերը հայկազանց։
Մի՞թե ես չեմ պայազատել իմ աշխարհում ազատ
Իմ նախահայրերին։

Վաղընջական հրնում

Բախվել են, ճիշտ է, մեր դյուցազնական նախնիք,
Եվ հաղթության արևը երջանիկ
Մեկ ձեզ է փայփայել,
Մեկ մեզ է փայփայել։
Արդ, մեծ Նինոս և իմաստուն իմ հայրը Արամ։
Իրենց աստվածների անմահ կամաց վայել,
Դարձան իրար ընկեր և բարեկամ։
Այդ էր օգուտը արամյան երկրի,
Օգուտն էր այդ և ասորաց երկրի։
Եվ ես, Արա և Արամա որդին և զարմ խալդյան,
Ես չեմ սովոր քամահրական այդ բարբառին։
Հոժար սրտով եկել եմ ես Ասորեստան
Եվ ձեզ բերել եմ ոչ թե հարկ ըստրկության,
Այլ ընծաներ հավասարից հավասարին[9]։

Արժանապատվության զգացումն այս դիցապատմական ողբերգության մեջ հատուկ է բոլոր հայ կերպարներին, հատկապես Արքայամորը, որը հայ գրականության ուժեղ կանացի կերպարներից մեկն է։

Արժանապատվության այս զգացումն է թևածում նաև «Զայն հայրենականում», որն ունի ռազմաճակատի հայ քաջորդիներին հայ ժողովրդի կողմից ուղղված չափածո ուղերձի ձև։ Այստեղ ևս բանաստեղծի հիմնական նպատակն է մարտիկներին հիշեցնել, որ, ինչպես ասել է քերթողահայր Խորենացին, «Չի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ... սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշ-

9 Նույն տեղում, հ. II, Երևան, 1962, էջ 125—126։

խարհիս»[10]։ Զարյանը փառաբանում է հայոց հզոր նախնիներին, Տիգրան Մեծին.

Որ մի ձեռքով բռնեց եղջյուրն Արևելքի,
Եվ մի ձեռքով՝ եղջյուրն Արևմուտքի,
Եվ զույգ ահեղ ցուլերի պես նրանց ի բաց վանեց՝
Սահմանելով այն հողն ավանդական,
Որ դարերով եղել է Հայաստան։
Նա քաղաքներ շինեց։
Քաջալերեց գուսանական արվեստ,
Կրծքին արևն առավ իբրև նետակայուն զրահ։
Եվ քանդակեց իր կերպարանքը վեհ
Մետաղաձույլ դրամների
Եվ իր դարի,
Եվ փոթորկոտ մեր պատմության վրա[11]։

Քերթողահայր Խորենացուն.

Որ մի ձեռքով բռնեց կերոնն Արևելքի
Եվ մի ձեռքով՝ կերոնն Արևմուտքի,
Եվ լույս արավ դեպի դարերը հին։
Տեսավ նա այն ուղին,
Որով անցել էր քարավանը մեր ամպրոպածեծ։
Առասպելի ոսկյա կեղևը նա բացեց,
Գտավ մեր պատմության կորիզը կենսաթով,
Եվ այն, ինչ նիզակով էր նվաճել Տիգրանը մեծ,
Նա նվաճեց կրկին մագաղաթով[12]։

Ապա փառաբանում է Ավարայրի հերոսին, Մաշտոցին, Եղնիկին ու Եղիշեին, հետո Նարեկացուն՝ «Մեր լեռների անդնդախոր» Դանթեին, ինչպես կոչում է նրան, հայկական հնադարյան դրչությունն ու ճարտարապետությունը, էպոսի մեծ հայրենասեր Դավթին, Հոկտեմբերի համար իրենց երիտասարդ կյանքերը զոհած հայ հերոսներին։ Այս բոլորը նա ի մի է բերում ու թվարկում կրակված սրտով, որպեսզի անցյալի օրինակներով ի մարտ քաջալերի հայ քաջորդիներին.

Հայո՜ց քաջեր, մեր Սասնա տան սյունե՜ր,
Հերոսության ու հանճարի այս մրցամարտերում
Հիշե՜ք, որ մենք աղեղի պես լարած մկան ու ներվ՝
Ձեր վիպական կռվին ենք հետևում։
Կռվեք այնպե՜ս, որ սաղավարտը Վարդանի գետնով չտաք,
Որ ամպ չառնի իր ծեր գլխին Մասիսն՝ ամոթապարտ,
Որ ժողովուրդների դեմքին նայենք միշտ համարձակ
Եվ ձեզանով հավերժորեն հպարտ[13]։

---

10 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 10։
11 Նարի Զարյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 539։
12 Նույն տեղում, էջ 541։
13 Նույն տեղում, էջ 549—550։

Զարյանի՝ Հայրենական պատերազմի տարիների բանաստեղծությունը իր կառուցվածքով, գաղափարների հստակությամբ ու հատկապես էպիկական տողի զարմանալի պատկերավորությամբ կարելի է համարել հայ դարավոր քնարերգության խոշոր հաղթանակներից մեկը՝ ծնված բանաստեղծի մեծ տաղանդի ուժով ու բոցավառ հայրենասիրությամբ, որը ոգեշնչեց նրան բանաստեղծական առաջին իսկ քայլերից։

ПАТРИОТИЧЕСКАЯ ЛИРА НАИРИ ЗАРЬЯНА

ХАЖАК ГЮЛЬНАЗАРЯН

Резюме

На всех этапах развития советской литературы патриотические идеи находили своеобразное отражение в поэзии. В поэзии 1920-ых годов выражением патриотизма была борьба против чуждых идей ненавистного прошлого, злоупотребление которой, однако, порой приводило к отрицанию ценностей прошлого. Однако талантливые писатели, порой интуитивно, перенимали здоровые патриотические взгляды своих предшественников, представителей классической литературы. Одним из таких поэтов был Н. Зарьян, еще в 1922 г. написавший стихотворение «Прощание», посвященное родному селу.

В начале 1930-ых годов одной из форм выражения патриотизма стало художественное отображение процесса становления нового человека, а также восхваление достижений советского строя. Поэзия Н. Зарьяна 1930-ых годов посвящена именно этой теме.

В годы Великой Отечественной войны, когда защита Советской Родины стала основной темой литературы, творчество Н. Зарьяна было самым ярким выражением гражданского патриотизма в советской армянской литературе.